

ՅԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ինչպես սպասելի էր, Պարույր Սևակը 1969 թվականին գրած իր «Դժվարը իրենից հասուն լինելն է» ծրագրային հոդվածում առաջինը նկատեց, գնահատեց և, ամենակարևորը, նախազգուշացնող ու կողմնորոշող խորհուրդներ տվեց Յենրիկ Էդոյանի սերնդին՝ գրելով. «Գրական և ոչ գրական մամուլը (մանավանդ «Ավանգարդը»-ը և «Գարուն»-ը) լեցուն է երիտասարդ անուն-ազգանուններով: Օժտվածների թիվը տասնյակից պակաս չէ, այլ ավելի: Ամենաուրախալին, ըստ իս, այն է, որ այս սերունդը բերում է (և չէր էլ կարող չբերել) թարմություն»¹: Հիշյալ օժտվածների մեջ, ինչպես ցույց տվեցին հետագա տարիների ստեղծագործական որոնումները, իր անհատականությամբ ու տաղանդով հատկապես առանձնացավ Յենրիկ Էդոյանը՝ քչերից մեկը, որ յուրաքանչյուր հերթական գիրքը լույս ընծայելուց հետո, կարող է ասել, որ գտել է որոնածը, Չարենցի խոսքերով ասած՝ «նշանի ահագնությունը», փորձել է չչեղվել իր գեղագիտական հավատամքից, թեև այնպիսի ժամանակներ էին, երբ գրողներին թույլ չէին տալիս, ինչպես ինքը Էդոյանն է ասում, «գրականությունը ըմբռնել այնպես, ինչպես պահանջում էր ինքը գրականությունը, և ոչ թե պետական այրերը (դրանց մեջ մտնում են նաև բոլոր պետական բանաստեղծները, արձակագիրները, քննադատները...)»²: Յենրիկ Էդոյանը այս տեսակետից գնահատում է իր սերնդին (և դա, ինքնաբերաբար, նաև ինքնագնահատական է)՝ փաստելով, որ այդ սերունդը գրականությունն ըմբռնել է այնպես, ինչպես պահանջում էր ինքը գրականությունը, չնայած որ այս սկզբունքային պահվածքը գաղափարական բնույթի բազում խոչընդոտներ էր հարուցում ստեղծագործող անհատականությունների ճանապարհին, քանի որ, այսպես կոչված, սոցեալիզմի կադապարները հեղինակներին ոչ թե հրամցված էին, այլ պարտադրված: Ասենք, որ սերնդակիցների մեջ, երևի թե, Յենրիկ Էդոյանը եզակիներից մեկն է, որի ժողովածուներում, իր խոսքերով ասած, «սոցեալիզմի սովերն անգամ չի եղել»³: Բացի այդ, ինչպես մյուսները, Էդոյանը ևս՝ գիրք տպագրելու և իր ընթերցողներին ներկայացնելու համար պետք է անցներ, ավելի ճիշտ կլինի ասել՝ շրջանցեր նաև տարաբնույթ ուրիշ

¹ Պարույր Սևակ, Երկ. ժող., հ. v, Երևան, 1974, էջ 337:

² Պոեզիան ստեղծում է իրականություն, (հարցազրույց Յ. Էդոյանի հետ) «Ազգ» օրաթերթ, 26-ը օգոստոսի, Երևան, 2000:

³ Նույն տեղում:

խոչընդոտներ, չենթարկվեր պոեզիայի նկատմամբ գոյություն ունեցող քարացած պատկերացումներին, ինչպիսիք էին, օրինակ, ազգային ավանդների մակերեսային ընթռնումները, որոնք ժամանակի հնադավան քննադատների «ջանքերի» շնորհիվ երբեմն վերածվում էին գրական նախապաշարմունքի: Մեծ նորարարը Պարույր Սևակը հեռատեսորեն նկատեց, որ Յենրիկ էդոյանի սերունդը «ազատագրվել է գրական նախապաշարմունքից, որ այլ բան չէ, քան կամավոր գերություն, իսկ սա գերության վատթարագույն տեսակն է: Մեր երիտասարդությունն ազատագրվել է սովորույթի ուժից, իսկ դա ես համարում եմ մեծագույն հաղթանակ...»⁴: Հայ պոեզիայի նորացմանը նախանձախնդիր հանձարեղ բանաստեղծի այս գնահատականը միտում ուներ մի կողմից ոգևորել երիտասարդ սերնդին սովորույթի՝ պոեզիայի զարգացմանն արգելա-կող ուժի հաղթահարման համար, մյուս կողմից ընդգծել ժամանակի քննադատության մտավոր ծուլությունը, որը ընդունված ստանդարտներից, սերտած ու յուրացրած գեղարվեստական ձևերից, ազգային ավանդների պարզունակ ընկալումներից այն կողմ չէր տեսնում և ինչպես Յենրիկ էդոյանին, այնպես էլ նրա սերնդի իսկապես նորարար մյուս բանաստեղծներին համարում էր ազգային ավանդներն արհամարհող ու անտեսող, կյանքից ու հողից կտրված, այսպես կոչված «գեղագիտական այլախոհությանը» դավաճողներ...

Այս և այս կարգի ծաղկումներն ու մեղադրանքները անցյալ դարի 60-70-ական, ընդհուպ մինչև 80-ական թվականները եթե լուրջ պատնեշներ էին գրքեր լույս ընծայելու և ընթերցողի ընկալմանն ու գնահատմանը հասնելու համար, ապա այժմ, թերևս ծիծաղելի լինելուց բացի, պերճախոս ապացույցն են այն բանի, որ նրանք պահել են սերնդին ամենաբնորոշ հատկանիշը՝ արդարացի ինքնավստահությունը, տուրք չեն տվել ժամանակի պոեզիայում շոնդացող սին խոսքերին, որոնց պատվիրատուները սովետական «պետական» այրերն էին, կատարողները՝ «պետական» բանաստեղծները, արծակագիրները, դրվատողները՝ «պետական» քննադատները: Յենրիկ էդոյանը այդպիսիներից իրեն տարանջատ պահելու սկզբունքը ավելի որոշակի ու հնչեղ արտահայտում է բանաստեղծական հետևյալ հեգնալից քառատողով.

Սուտ խոսքերի առատության միջով, որ մեզ է պարզակած
Մենք անցնում ենք անտրտունք, անծայն
Եվ մեր աչքերի մեջ կառուցում ենք հարմար մի տուն
Հավատալով, որ այնտեղ կապրենք ևս մեկ դար...

⁴ Պարույր Սևակ, նշվ. աշխ., էջ 338: Հատկանշական է, որ Յենրիկ էդոյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն տպագրության է երաշխավորել Հովհաննես Շիրազը և հորդորել «Հայաստան» հրատարակչության այն տարիների տնօրեն, պոռՖեսոր Խիկար Բարսեղյանին. «Յենրիկ էդոյանը արժանի է ուշադրության...կարող է իսկական բանաստեղծ դառնալ»: (Խ.Հ. Բարսեղյան, Հովհաննես Շիրազ: Հուշ-նովներ, մասունքներ, Երևան, 1968, էջ 49):

Ոգու սպասավորը՝ բանաստեղծը, երևակայականը դարձնում է իրական «և մեր աչքերի մեջ կառուցում ենք հարմար մի տուն», հաստատելով իր որդեգրած այն սկզբունքը, թե «երևակայականը գրականության մեջ նույնքան իրական է, որքան իրականը՝ երևակայական»⁵։ Այս մոտեցումը, որի նկատմամբ իր աներկբա հավատարմության մասին էդոյանը խոսում է «Պոեզիան ստեղծում է իրականություն» հարցազրույցում, իր հողվածներում ու երկխոսություններում, փաստորեն անթաքույց նպատակ ունի կողմնորոշել ոչ միայն իր ընթերցողին, որը, ի տարբերություն զանգվածային ընթերցողի, պետք է ունենա պոեզիայի ընկալման որոշակի մակարդակ և զերծ լինի, իր բառերով ասած, «ընկալման իներցիայից», այլև բանալի պետք է ծառայի Զենրիկ էդոյանի «փակ տեքստով» պոեզիան մեկնաբանող քննադատների համար։ Երևակայականի և իրականի համադրումը կարող է պոետական ասելիքը դարձնել վերացական ու թողնել «անառարկա խոհի շրջանակներում», ուստի և անհրաժեշտ է դառնում հաղթահարել այդ վերացականության սպավորությունը, մի բան, որ էդոյանը մի դիպուկ արտահայտությամբ կամ մի խոսուն պատկերով կատարում է։ Բանաստեղծի ստեղծագործության այս նրբին հատկանիշը հանգամանորեն բացահայտել է ճանաչված գրաքննադատ, պրոֆ. Ժենյա Քալանթարյանը իր «Ժամանակի բանաստեղծական խորհուրդը» հողվածում նվիրված Զենրիկ էդոյանի «Երեք օր առանց ժամանակի» գրքին։ «...էդոյանը,- գրում է գրաքննադատը,- խոսում է «փակ տեքստով», որը կռահումների առիթ է տալիս, բայց նա փորձում է չմնալ վերացական ու անառարկա խոհի շրջանակներում, ու թեև Աստված նրան տվել է «մի հեռադիտակ», (որ նայի աստղերին, մոտեցող ու անցնող, մոլորակներին), բայց նա հեռադիտակն ուղղել է ոտքի տակի հողին և փնտրում է իր տեղը իրական կյանքում.

Ես ոտքս դնելու մի տեղ եմ փնտրում
Ճահճի մեջ համատարած

Ուտք դնելու տեղը գտնելու և «ամեն ինչ իմացող» հողի ձայնը լսելու համար էդոյանը մերթընդմերթ բացում է իր փակ տեքստի փակագծերը, և իրական կյանքի իրադարձությունները կարծես հոսում են նրա բանաստեղծական տողերից ներս և ստեղծում բանաստեղծի ոճին ոչ բնորոշ՝ առօրյայի իրական ու մանրամասներով հագեցած պատկերը։

Սրճարաններում մատուցողները
Դեռ չեն լցրել առաջին բաժակները,
և սուրճի հոտը դեռ չի տարածվել
լրագրերի կրպակները դեռ նոր
սկսել են բացվել, և

⁵ Պոեզիան ստեղծում է իրականություն, (հարցազրույց Զ. էդոյանի հետ) «Ազգ» օրաթերթ, 26-ը օգոստոսի, Երևան, 2000:

ոչ ոք նոր լրագիր դեռ չի
հասցրել կարդալ⁶:

«Հայացք օրվա մեջ» վերնագրով բանաստեղծությունից մեքերված այս տողերում «փոխաբերությունները դառնում են իրական, հասկանալի, հիմքը՝ ճանաչելի.... Այնուամենայնիվ, եղոյանը մնում է պոեզիայի սահմաններում, ու թեև նրա բանաստեղծությունների ենթատեքստը ուրվագծում է մեզ ծանոթ իրերի աշխարհը, բայց գրողը բնավ չի խախտում բանաստեղծության և հրապարակախոսության սահմանը, և նրա խոսքը չի դառնում մերկապարանոց»⁷:

Հենրիկ եղոյան-արվեստագետին ըստ ամենայնի ճանաչելու համար անհրաժեշտ է բացահայտել, թե նա որտեղի՞ց է ակունք առել, սերվել: Բնության առեղծվածային գաղտնիքներից մեկը սերումն է, և յուրաքանչյուր գրողի հետ ի հայտ է գալիս խորհրդավոր ու անբացատրելի մի աշխարհ, որը, ընդունելով այս աշխարհի ռեալությունը, միաժամանակ, հայտնաբերում է աներևույթ, այլ մահկանացուների համար անտեսանելի ռեալություններ, որոնք այսուհանդերձ երևակայականի սահմաններում են:

«Գարուն» ամսագրի «Գրողը և ժամանակը» հարցաթերթիկի «Ինչպե՞ս կընդունեք ձեր գրական աշխարհը» հարցին պատասխանելիս՝ Հենրիկ եղոյանը հետաքրքիր դիտարկում է անում. «Կարելի է խոսել ոչ թե սեփական աշխարհի, այլ դեպի Աշխարհը տանող սեփական ուղու մասին: Բանաստեղծի աչքերը պետք է ուղղված լինեն դեպի այդ Աշխարհը, որը, ինչպես լուսանկար, կարող է երևակվել նրա լեզվի մեջ: Զգացմունքի և մտքի շփումից բռնկվում է այն լույսը, որը նման է լուսանկարչական ապարատի վրա տեղադրված էլեկտրական լույսի բռնկմանը, առանց դրա, ինչպես գիտենք, նկարը չի ստացվի, առանց փորձի (զգացմունքի և մտքի, կամ՝ ընկալման և հասկացության հանդիպումը միմյանց) չի ծնվի ստեղծագործությունը «Պոեզիան սկսվում է փորձից», - ասում էր Ռ.Մ. Ռիլկեն: Թող ինձ ներվի, որ ես հիմա խոսում եմ այս ամենի մասին, բայց, կարծում եմ, որ արդեն ժամանակն է գրականությանը (մասնավորապես բանաստեղծությանը) վերադարձնել նրա լրջությունը, նրա հոգևոր-ճանաչողական նշանակությանը, հակառակ դեպքում այն չափից դուրս կհասարականա, կդառնա մտքերի և մակերեսային հակումների պարզունակ նկարագրություն...»:

Այո, 60-ական թվականների կեսերին հայ բանաստեղծությունը արդեն ինչ-որ չափով ազատագրվում էր գորշ, պարտադրող ճաշակից, «զանգուր

⁶ Զալանթարյան Ժ. Ժամանակի բանաստեղծական խորհուրդը, Հայաստանի Հանրապետություն, 15-հոկտեմբերի, Երևան, 2005:

⁷ Նույն տեղում:

⁸ Գրողը և ժամանակը... «Գարուն», թիվ 11-12, Երևան, 1997, էջ 45:

բառերի վաճառականությունից», սովետական «ուշացած և ժամանակավրեպ կեղծ ռոմանտիզմի»⁹ էժան ոգևորությունից և պետական-պաշտոնական գրականության գերադասությունից: Ասպարեզ էր մտնում երիտասարդ ստեղծագործողների մի խումբ (որի մեջ էր Յենրիկ Էդոյանը), որը հաստատականորեն նպատակադրված էր նորոգել և զարգացնել պոեզիան: Երիտասարդ բանաստեղծների հիշյալ խմբի մեջ ժամանակի առողջ քննադատական միտքը առանձնացրեց Յենրիկ Էդոյանին գտնելով, որ նա նոր սերնդի տեսական-գեղագիտական-բանաստեղծական խոսքի ամենաշեշտված կրողն ու արտահայտիչն է, այդ սերնդի բանաստեղծության թրևս ամենաբարձր մակարդակը: Քննադատները իրենց գրախոսականներում այն համոզումն ունեին, որ նրա բանաստեղծական տողին բնորոշ են նրբին հոգեվիճակները, ինտելեկտուալ ներաշխարհի ունեցող մարդու սրված զգացումները: Երևակայության կամ դատողության եթերային ճախրանքների կողքին, Յենրիկ Էդոյանը ստեղծում էր իրական կյանքի շոշոփելի և տարողունակ պատկերներ. «Կեսօրն, ինչպես պտուղ, օդում հասունանում, պայթում է ձեռքիդ մեջ», «Լարվում է ժամացույցը սրտի», «Ես գիտեմ, շուտով կխեղդվեմ քո մազերից, հեղեղի պես թափվող», «Ոչ թե հրդեհն էր, այլ մայրամուտն էր քաղաքը նվաճում», «Մայրամուտի ծվից ելնում է առավոտը փոքրիկ թևերով», «Համբերության ծաղիկներն աճում են միայն քարի մեջ»:

Հարկ է նշել, որ հենց սկզբից ավագ սերնդի քննադատները և բանաստեղծները, չնչին բացառությամբ, կանխակալ ժխտողական վերաբերմունք ցուցաբերեցին և Յենրիկ Էդոյանի, և նրա սերնդակիցների ստեղծած պոեզիայի նկատմամբ: Նրանք միտված չէին հաղթահարելու պոեզիայի «ընկալման իներցիան», նրանց նախասիրությունները պատմողական-նկարագրական չափածոյի սահմաններից այն կողմ, կարծես թե, չէին անցնում: Գևորգ Էմինը, հայ պոեզիայի նորացմանն ու թարմացմանը նախանձախնդիր քչերից մեկն էր, որ հակառակվեց պահպանողական-ժխտողական կարծիքներին և Յենրիկ Էդոյանի «Երկրային ժամանակ» ժողովածուի մասին իր «Դրվատամբ և դիտողություններ» հոդվածում գրեց. «Յենրիկ Էդոյանի համար բնորոշ ու հատկանշական է բանաստեղծությունների խոհական-փիլիսոփայական երանգը, պատկերների ու տրամադրությունների ինչ-որ չափով «քմահաճ» հոսքը... Սեր այսօրվա տաղանդավոր ու ինքնատիպ բանաստեղծներից մեկն է, որ իր ուրույն տեղն է գրավել սովետահայ պոեզիայում և որն իր «Երկրային ժամանակ» գրքով ավելի է ամրապնդում այդ»¹⁰.

⁹ Կալաշտրյան Յու., Բանաստեղծը, «Ազգ» օրաթերթ, 31-ը օգոստոսի, Երևան, 2000:

¹⁰ Էմին Գ., Երկրային ժամանակ (Պոեզիայի մի քանի հարցերի մասին Յենրիկ Էդոյանի համանուն գրքի առիթով), Գրական թերթ, թիվ 45, 28-ը հոկտեմբերի, Երևան, 1983:

Իսկական բանստեղծի ձիրքը աստվածատուր է՝ բանստեղծ չեն դառնում, բանստեղծ ծնվում են, և էդոյանը այն աներկբա համոզմունքով է ապրել և ապրում, որ՝

Այն, ինչ խոստացել ես
դու կտաս ինձ, Աստված
կամ գուցե ես քեզ լավ չեմ ըմբռնել,
և թո ժեստը մի օր
ես կարծել եմ ինձ համար նետված մի ակնարկ

Ոչ միայն պոեզիայում, այլև անգամ արձակում, ինչպիսին է, օրինակ, «300 տարվա բանտարկություն» վերնագրով պատմվածքը, Չենրիկ էդոյանը հակված է» տալ ժամանակային ընկալումներ՝ դիմելով ենթագիտակցական շերտերին, ուր երազը հանդես է գալիս իբրև իրականություն, իրականությունը իբրև երազ (այսպես ասած, մետաֆիզիկական սյուրռեալիզմ)¹¹:

Չենրիկ էդոյան բանաստեղծի ակունքներում, ինչպես վկայում են նրա մերձավոր ընկերները և ինքը, բարոյական մեծ դեր է ունեցել մայրը Ատլասը, որը, լինելով հավատացյալ, Սուրբ Գիրքն է մշտապես կարդացել իր որդու համար՝ հոգևոր պաշտպանության մղել նրան, կեղծիքներից հեռու մնալու պատվիրան տվել, դեպի լույսին ու բարությանը ընթանալու կամքով զինել:

Բանաստեղծությունից մինչև Ավետարան
մի քայլ է միայն, որ երբեք չի արվելու:

Եվ այսօր էդոյանը կարող է վստահորեն հայտարարել, որ «սուտ խոսքերի առատության միջով» ինքն անցել է, իր բառերով ասած, ոչ միայն «անտրտուն, անծայն», այլև հերքել է այդ սուտը, մարդկանց ներշնչել՝ չտրվել ու չենթարկվել այդ ստին, որը խորհրդային համակարգի գաղափարախոսության անկյունաքարն էր, սոցոեալիզմի համահարթեցնող կաղապարը.

Իսկ եթե ոսկին ժանգոտում է:
Իսկ եթե մարգարիտը կե՞ղծ է

.....
Ոսկին ժանգոտում է,
Մարգարիտը կեղծ է:

«Սուտ խոսքերի առատություն» ստեղծողները, ինչպես ճշմարտախոս մյուս բանաստեղծներին, այնպես էլ Չենրիկը էդոյանին չէին կարող հանդուրժել, ոչ միայն չէին հանդուրժում, այլև հետևողականորեն հալածում էին, նրանց առաջ փակում էին մամուլի ու հրատարակչությունների դռները, պարտադրում, որ գրեն «քաղաքացիական բանաստեղծություններ», արժարժեն «հրատապ թեմաներ»¹²....Այս բոլոր պահանջները ոչ թե սոսկ պահանջ էին կամ ցանկու-

¹¹ Գրողը և ժամանակը, Գարուն, թիվ 11-12, Երևան, 1997, էջ 45:

¹² Թոփչյան Ա., Երկրային ժամանակի 50 տարին, Երեկոյան Երևան, 15-ը սեպտեմբեր, Երևան, 1990:

թյուն, այլ վերջնագրի տեսքով պարտադրանք, բանաստեղծությունների շարքը թերթում տպագրելու խիստ պայման, գիրքը լույս ընծայելու միակ միջոցը: «...պաշտոնական դարձող բանաստեղծական ճաշակը չէր հանդուրժում նոր որևէ բան և պարզապես փակում էր նոր մտածողության կամ, ավելի ճիշտ, այլ մտածողության մուտքն ու ճանապարհը»¹³: Ի պատիվ Յենրիկ Էդոյանի, սկսած 1960-ական թվականներից մինչև «սուտ խոսքերի առատության» երկրի՝ հոորիրդային միության փլուզումը, նա չենթարկվեց այդ բռնի պարտադրանքների, հավատարիմ մնաց իր բանաստեղծական բարոյականությանը, պահեց իր սեփական դեմքը, ինչպես հին վարպետների անհետացող կտավը վերականգնող վարպետն է հայտնագործում սեփական դեմքը:

...Մի նոր նկար է կտավից հանում,
Ինչպես հայելի, որի լույսի մեջ
Նա իր սեփական դեմքն է ստանում:

Բանաստեղծական վճիտ ակունքներից մինչև իր տաղանդի փայլատակումը՝ «Երեք օր առանց ժամանակի» գիրքը, Յենրիկ Էդոյանը դժվարին ու արգասաբեր երկար ճանապարհ է անցել, վերահասու եղել ազգային ոգու բազում գաղտնիքներին, ազգային ինքնության դարավոր դրսևորումներին՝ առասպելից, Գողթան երգերից մինչև Եղիշե Չարենց, որին նվիրված աշխատությունը հայ գրականագիտության բարձրարժեք նմուշներից է: «Այս աշխատությանը,- գրում է վաստակաշատ գրաքննադատ Ալեքսանդր Թոփչյանը,- Յենրիկ Էդոյանը, ինձ համար, ընդհուպ մոտեցավ բանստեղծ-մտավորականի այն տիպարին, որը կարող էր ծնել միայն քսաներորդ դարը. ստեղծագործությունը, անկախ ժանրից, բարձր, կազմավորված մտքի արգասիք է, հեռու տարերայնությունից, անկազմակերպ հուզականությունից: Բանաստեղծությունը կուլտուրայի բարձրագույն արտահայտություն է, ուստի միայն համաշխարհային հոգևոր զանձարանը յուրացրած ստեղծագործողը կարող է այսօր արժեք ստեղծել և խոսել իր անունից»¹⁴:

Օ, հավերժական լուսաճառագու՜մ
իրերի,դեմքերի, կրքերի վրա-
եթե ես ապրում եմ՝ որտեղ է քո ուժը,
որ կարող է նույնիսկ աճել ինչպես ծառ
մի քարի բեկորի,
մի հանգած սրտի մոխիրների մեջ:

Պարզ ու միամիտ պատկերներ ի հայտ բերող ոտանավորներից մինչև կեցության բարդ առեղծվածներ առաջադրող, խոհական-փիլիսոփայական բանաստեղծությունների ասելիքին հասնելը, Յենրիկ Էդոյանը պահել է իր

¹³ Խաչատրյան Յու., նշվ. հոլմ.:

¹⁴ Թոփչյան Ա., նշված հոլմ.:

ստեղծագործական ուրույն մտածելակերպը դեռևս 1980-ական թվականներից համոզված լինելով, որ «Ճշմարտությունը մերկ չի մտնում աշխարհ» այլ՝ միայն իբրև խորհրդանիշ, որը «բառն է կամ բառային հաճախականությունը պոետական ստրուկտուրային գլխավոր սկզբունքը»։ Դեռևս երիտասարդ բանաստեղծն այն կարծիքին էր, որ «պոեզիան աշխարհի ճանաչման հզոր ձևերից մեկն է, որով մարդկային միտքը մուտք է գործում «Ճշմարտության աշխարհ»։ Կարելի է ասել, որ պոեզիան «ապագայի գիտություն է»¹⁵։ Տեսական դրույթները Հենրիկ Էդոյանը հաստատեց իր գրքերով . «Անդրադարձումներ» (1977թ.), «Պատկեր և կեսօր» (1980 թ.), «Երկրային ժամանակ» (1983թ.), «Այժմ և միշտ» (1987թ.), «Հարյուր տոնետ» (1993թ.), «Քայլեր և սովերներ» (1996թ.)... եվ վերջապես՝ «Երեք օր առանց ժամանակի» (2005թ.), որը «...ամրապնդում է արդի հայ բանաստեղծության հարուստ խճանկարում նրա գրաված առանձնահատուկ տեղը»¹⁶։ Սա մեր այսօրվա ամենախստահայաց ու խորատես գրականագետներից մեկի ժեյա Քալանթարյանի կարծիքն է, որի հետ հազիվ թե չհամաձայնողներ լինեն, եթե այս գիրքը կարդան և, ինչպես Պարույր Սևակն է ասել , «կարդացածը հասկանան»։ Այս վերջին վերապահումը անում ենք, քանի որ Հենրիկ Էդոյանը այն սակավաթիվ հեղինակներից է, որի ընթերցողները պետք է բարձրակարգ ինտելեկտի տեր լինեն, ավանդական պոեզիայի «ընկալման ինտերգիայից» իրենց դուրս դնեն և ընտրեն իրենց «ընթերցման տարբերակը»։ Ի դեպ, այստեղ ավելորդ չէ նշել, որ Էդոյանը և իր սերնդակիցները «մեղադրվել» են նաև «ինտելեկտուալ շանտաժի» մեջ, ինչին բանաստեղծը պատասխանել է՝ մեքերելով Անդրեյ Վոզնեսենսկու խոսքերը. «Ինչ վերաբերում է «ինտելեկտուալ շանտաժին», ապա ես ուզում եմ բերել ռուս-սովետական նշանավոր բանաստեղծ Անդրեյ Վոզնեսենսկու խոսքերը հայ պոեզիայի մասին. «Հայկական պոեզիան հանձինս Սևակի, Նարեկացուց և Եղիշե Չարենցից հետո նվաճեց ինտելեկտուալ մեծ բարձունք։ Այսօրվա երիտասարդների հատկապես ուժեղ թևը ուժեղ է հենց իր «ինտելեկտուալ խենթությամբ»։ Կարծում եմ առանց Պարույր Սևակի նրանք չէին լինի։ Նրանք կենդանի շարունակությունն են նրա ընդհատված ճակատագրի»¹⁷։

Հենրիկ Էդոյանը ապացուցեց, որ իրեն և իր գրքերին տրված բարձր գնահատականները ոչ թե շնորհիված են, այլ տաղանդով ու տքմանքով վաստակած։ Նա կարողացավ իր պոեզիան՝ իր «վաստակած բառը», հասկանալի ու սիրելի դարձնել այսօրվա և վաղվա ընթերցողին։

¹⁵ «Շարժում դեպի պոեզիա» (Հ. Էդոյանի և Պ. Դեմիրճյանի երկխոսությունը), «Գրական թերթ», 17-ը ապրիլի, Երևան, 1981։

¹⁶ Քալանթարյան ժ., նշվ. հոլվո՛ւ։

¹⁷ Էդոյան Հ., Լճացու՛մ, թե՛ առաջընթաց, Գրական թերթ, 22-ը փետրվարի, Երևան, 1985։